Աշխատանքի ծածկագիր 1959

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք. Երևան 18.01.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ս. Սահակյանի
մասնակցությամբ անդամներ՝
Լ. Գրիգորյանի
Վ.Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով ենթաբաժինն արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 12-րդ, 7-րդ, 29-րդ, 30-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարության բաժին

Հարց 12

Բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ճիշտ պատասխան բխում է ՔԴՕ 255-րդ հոդվածի 1-ին մասից: Միավորը վերանայման ենթակա չէ:

Հարց 7

Հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 346-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի կարգավորումներից, քանի որ անձին անգործունակ ճանաչելու դատական ակտը անձի իրավական վիճակին վերաբերյալ դատական ակտ է: Միավորը վերանայման ենթակա չէ:

Հարց 29

Հանձնաժողովը գտնում է, որ հարցի նման ձևակերպման պայմաններում ենթադրելի չորս պատասխանները չեն բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից, այլ ընդհակառակը՝ ըստ նույն օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի բացառվում հարցադրմամբ ներկայացված իրավիճակի առկայությունը, քանի որ օրենսդիրը պարտադիր է համարում նշել յուրաքանչյուր պատասխանողի պարտավորության չափը կամ պատասխանատվության համապարտությունը: Այսինքն, դատարանի կողմից նման վճիռ կայացվելու դեպքում, հնարավոր չէ ենթադրություններով եզրահանգում կատարել պատասխանատվության տեսակի վերաբերյալ: Ուստի, հարցի թերի ձևակերպման պայմաններում, հարցին տրված պատասխանը պետք է համարել ճիշտ:

Հարց 30

Բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ բ/ տարբերակը ճիշտ պատասխանն է, բխում է ՔԴՕ 303-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից, քանի որ պահանջը գրավոր գործարքի վրա հիմնված լինելն ինքնին բավարար չէ արագացված դատաքննություն կիրառելու համար, այլ միաժամանակյա պարտադիր պայման է նաև պատասխանողի կողմից այդ գործարքի վավերությունը չվիճարկելը: Միավորը ենթակա չէ վերանայման:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 1959 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քաղաքացիական դատավարության բաժնի 29-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ